

ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ «ՏՆՆՉԱՅ ՍԱԹԵՆԻԿ ՏԻԿԻՆ» ՀԱՏՎԱԾԸ

Բաճապիր. գիտ. դոկտոր Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» ամփոփում է հայոց հին վիպասանքից 12 հատված: Այսօր դժվար է հերազնահատել բանավոր այդ հատվածների կարևորությունը հայոց լեզվի պատմության, առհասարակ հայ մշակույթի առումով: Դրանք, ինչպես ընդունված է ասել բանասիրության մեջ, նմուշ են հայ ժողովրդի պատմության վաղնջական ժամանակների, ըստ որում՝ հայոց կյանքում ազգային հերոսներին նվիրված պատմաների: Դրանք «երգվող» գուսանական նմուշներ են, բանավոր պատումներ: Միանգամայն իրավացի է Հ. Աճառյանը, որ այդ «երգերը» համարում է վիպասանություն, իսկ դրանց լեզուն՝ «վիպասանական հայերեն», ելնելով, ինչ խոսք, միայն բովանդակությունից: Ի թիվս հին գրական հայերենի բառապաշարի կտրվածքում հասկանալի և ըստ ամենայնի մեկնաբանելի բառերի ու բառակապակցությունների՝ տեղ են գտել այնպիսիները, որոնք իրավասա արտացոլում են վաղնջահայերենի՝ նախագրային հայերենին նախորդող շրջանի լեզվի բառապաշարի տվյալները:

Նվ քանի որ այդ հատվածները կազմում են նախաքրիստոնեական հայ իրականության, հայ բանավոր խոսքի պատառիկներ, ուստի գրանցում տեղ գտած բառերն ու բառակապակցությունները, ամբողջությամբ առնված՝ բնագրերն անհրկրայորեն հասկանալու համար անհրաժեշտ է ոչ միայն ձևաբանական վաղ միջնադարի գաղափարաբանությունից, այլ նաև ըստ հնարավորին խորանալ նախագրային հայերենի լեզվական օրինաչափությունները՝ վերականգնել իրացումների սերտ, համակարգի մեջ: Դա, ինչ խոսք, այսօր էլ դուրսից գործ չէ, որովհետև այդ պատառիկ-հատվածները մեզանից բավական հեռու են ընկած, հանդիսանում են կոնկրետ ժամանակաշրջանի մտածողության և առհասարակ ոգու արտացոլում: Ուստի անհրաժեշտ է ըստ ամենայնի հաշվի առնել այդ հանգամանքը, այսինքն՝ նկատի ունենալ տեղ գտած բառերի իմաստափոխության զանազան հիմունքները, բառերի առանձին իմաստների հնարավոր իրացումները՝ կապված հատկապես վաղնջական ժամանակներին բնորոշ «երգային» խոսքի փոխաբերացման, այլաբանության հետ: Դրանով, անշուշտ, կարող է ավելի հեշտանալ մեզ հետաքրքրող հատվածի խոր ըմբռնման և նորովի մեկնաբանման գործը:

Նվաճ հատվածները կազմում են 52 տող, որոնք հայ բանասիրության մեջ հաճախ նշվում են իբրև շափածո խոսքի նմուշներ: Դրանցից 10-ը (38 տող) առնչվում են հայոց Արտաշես I թագավորին (դա՛հ. Բ. ա. 189—160 թթ.):

Հայտնի է, որ այս թագավորը եղել է պետական և ռազմական գործերում բավական հմուտ և զորեղ, կարողացել է զգալիորեն միավորել հայկական պետությունը մեկ միասնական իշխանության ներքո: Նա ի զորու է եղել նաև ընդդիմանալ բազմաթիվ օտար նվաճողների հարձակումներին, ջանք չի խնայել հզորացնելու և ամրապնդելու հայոց տերությունը՝ իր հնամենի բնօրրանում: Բայց հայտնի է նաև, որ Արտաշես I-ը եղել է անձնապես աներջանիկ թագավոր: Դա երևան է եկել ամենից առաջ իր ապաշնորհ ու «հայրամերժ» որդու պարագայում. այդ մասին է հավաստում հիշյալ հատվածներից մեկը, որտեղ պատմվում է Արտաշես I-ի ժառանգորդ Արտավազդի մասին: Հայտնի է այդ հատվածը: Կարծում ենք, Արտաշես I-ի աներջանիկ լինելը հա-

վաստվում է նաև այն բանում, որ հիշյալ հատվածներից մեկում ծանակվում է Արտաշես I-ի կնոջ՝ Սաթենիկ տիկնոջ անխոհեմությունը:

Այդ հատվածում, ինչպես դիտենք, խոսվում է այն մասին, որ Սաթենիկը դուստրն է ավանների թագավորի, ում որդուն գերեվարել էր Արտաշես I-ը դեպի հյուսիս ձեռնարկած իր մի արշավանքի ժամանակ: Այդ ժամանակ էլ իր հանդուգն քաջությամբ և համարձակությամբ աչքի է ընկնում ավանների արքայադուստրը՝ Սաթենիկը: Նա վեհանձն դիմումով պահանջում է հետ վերադարձնել իր եղբորը, ավելին՝ հանդիմանում է, թե հերոսական ժողովուրդներին վայել չէ գերեվարությունը միմյանց հանդեպ, ոչ էլ պատվաբեր՝ ստրկացումը: Այդ հանդգնությունը դառնում է այն ղրղապատճառը, որպեսզի Արտաշեսն ուզենա, ինչ գնով էլ լինի, փախցնել Սաթենիկին: Այնուհետև տեղի է ունենում նրանց հարսանյաց տոնախմբությունն ու հանդեսը: Բայց արդյունքը լինում է այն, որ ավանների արքայադուստր Սաթենիկն անհավատարմություն է հանդես բերում իր ամուսնու հանդեպ. նա սեր, ավելին՝ տոհմանք է տաժում մեկ այլ քաջի նկատմամբ: Այստեղ ուշադրության է արժանի հետևյալը. հայոց գուսանները ծանակում են այդ սերն ու տոհմանքը, որ նշանակում է, թե նախաքրիստոնեական շրջանի հայ ժողովրդի սովորություններում ևս ամուր նստած է եղել ընտանեկանությունը, ամուսնասիրությունը: Հակառակ պարագան դառնում էր պախարակելի, այսպեսնալի ու ծաղրի արժանի: Այս իրողությունն է, որ ծանակվում է մեզ հասած վիպասանքում:

Տենչայ Սաթենիկ տիկին տենչանս՝
Ջարտախոյր խաւարտ և զտից խաւարծի
Ի բարձիցն Արգաւանայ:

Երեքտողանի այս հատվածը վաղուց ի վեր եղել է բանասիրական ամենալայն քննարկման առարկա: Այն սկիզբ է առնում Խորենացու «Հայոց պատմություն» առաջին տպագրությունից (Ամստերդամ, 1695 թ.) և շարունակվում է մինչև մեր օրերը: Ավելին, մենք հակված ենք կարծելու, որ այդ հատվածը խորհելու, մեկնաբանելու և ըմբռնելու տեղիք է տվել նաև պատմահոր ձեռագրերի հետ կապված գրադրական աշխատանքների ընթացքում:

Այսպես, հարկ ենք համարում նշել, որ մեզ հասած ձեռագրերում հանդիպում են մեզ հետաքրքրող հատվածի գրչության զգալի թվով տարբերություններ: Ուստի վստահորեն կարելի է ասել, որ ընդամենը 3 տողից բաղկացած հիշյալ հատվածը երկարուձիգ դարեր, հատկապես հետագա ժամանակներում, հանդիսացել է տարբեր ընթերցումների և մեկնաբանությունների առարկա: Այդուհանդերձ, այն հարուցել է բանասերների, լեզվաբանների, ազգագրագետների վեճն ու պնդումը թե՛ հիմքում ընկած երևույթի իմաստաբանության և թե՛ լեզվական ձևերի ճանաչման, բառային ստուգաբանության ու վերլուծության ճանապարհին:

Հարցն այն է, որ այդ հատվածի ճշմարտացի մեկնաբանությունն ու լեզվաբանական ստուգաբանությունն առ այսօր մնում են միանգամայն վիճահարույց, առարկելի ու ոչ վերջնական: Եվ այս էլ, բնականաբար, ստիպում է մեզ անդրադառնալու հիշյալ հատվածի լեզվաբանական-բանասիրական քննությանը՝ փորձելով տալ նրա ստուգաբանական-իմաստաբանական մեկնաբանությունը:

¹ Սույն հատվածը բանասեր-բնագրագետները բերում են ընդարձակ շարադրանքով, իսկ լեզվաբանները՝ չափաժու, Հմմտ. Մովսիսի Խորենացուց Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղյան և Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913, էջ 84: Գ. Տեղ-Մկրտչյան. Հայագիտական ուսումնասիրություններ. դիրք Ա, Երևան, 1979, էջ 133—134: Զ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. մաս II, Երևան, 1951, էջ 68: Գ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան). Երևան, 1987, էջ 367 և այլն:

Իսկ մինչ այդ հարկ ենք համարում գիտական նոր չափանիշներով անգրագատնալ այդ հատվածի վերաբերյալ նախկինում երևան եկած գնահատություններին և գիտական արծարծումներին:

Եղած կարծիքներին ժամանակին անդրադարձել է Հ. Աճառյանը՝ հիշյալ հատվածի «անստույգ» բառերի մեկնաբանությանը նվիրելով հատուկ հոդված²: Հետագայում ևս Աճառյանը շոշափել է այդ հարցը՝ կապված հատկապես արտախոյր և մյուս անստույգ բառերի ստուգաբանության փորձի հետ³:

Հ. Աճառյանը բերում է տարբեր մասնագետների արտահայտած կարծիքները, տալիս է դրանց թուցիկ գնահատությունը: Սակայն ամեն դեպքում արտախոյր և մյուս «խրթին» բառերը մնում են չստուգաբանված:

Վերջերս լույս տեսավ Ա. Սարգսյանի բնագրագիտական ուսումնասիրությունը, որով լրացվում են պատմահոր երկի գրչագրական-ձեռագրական տարբերությունները⁴: Դրանով ավելի ամբողջական է դառնում «Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածի վերաբերյալ հայ բանասիրության և լեզվաբանության ձեռքբերումը:

Հիշյալ հատվածը տարբեր չափերով և մոտեցումներով քննության է առնվել աղբյուրագիտական աշխատանքներում (Թովմա Վանանդեցի, Գ. Խալաթյան, Եփր. Դավթյան, Գ. Տեր-Մկրտչյան, Ստ. Մալխասյանց, Ա. Սարգսյան և ուրիշներ): Դրան անդրադարձել են Խորենացու «Պատմության» բնագրի թարգմանությունների բերումով (Պ. Ֆլորիվալ, Խ. Ստեփանե, Ն. Թոմադեո, Վ. Լանգուա, Մ. Լաուեր, Գ. և Գ. Վինստոն եղբայրներ, Մ. էմին, Գ. Սարգսյան և այլք): Անհամեմատ մեծ թիվ են կազմում այն աշխատանքները, որոնք ամբողջացնում են այդ հատվածի քննական-բանասիրական վերլուծության շրջանակը (Առ. Բահաթրյան, Հովհ. Թումանյան, Ն. Անդրիկյան, Ա. Քիշմիշյանց, Սիոն վարդապետ, Ե. Սահակյան, Բ. Կպ. Գեորգյան, Վ. Հացունի, Եղ. Գեղամյանց և այլք): Քիչ չեն լեզվաբանական-ստուգաբանական ալե աշխատությունները, որոնցում այս կամ այն չափով տեղ են գտել մեզ հետաքրքրող հատվածի բառերն ու բառակապակցությունները (Մխիթար Սեբաստացի, Վնոր հայկազյան բառարանի» հեղինակներ, Գ. Պատկանյան, Պ. Լազարո, Հ. Հյուբշման, Հ. Աճառյան, Գ. Զահուկյան և ուրիշներ):

Վերը տրված առանձնացումից դուրս են մնում ձեռագրական-գրչագրական այն աշխատանքները, որոնք այսօր հայտնի են իբրև Խորենացու «Հայոց պատմության» գրչագրեր: Տեսականորեն չի բացառվում, որ ձեռագրերի մեջ գրչագրական տարբերություններ լինեն մեզ հետաքրքրող հատվածի վերաբերյալ: Չի բացառվում նաև այն, որ տարբեր ժամանակներում գրիչներն այդ հատվածի նկատմամբ արտահայտելիս են եղել իրենց վերաբերմունքը: Ուստի առաջին հայացքից թվում է, թե հարկ կար առանձին խումբ հատկացնելու այդ ձեռագրական աշխատանքներին: Բայց դա այդպես չէ, որովհետև նման աշխատանքները վերջիվերջո, իբրև ձեռագրական տարբերություններ, մատնանշվում են հետագա աղբյուրագիտական աշխատանքներում:

Մեզ հետաքրքրող հատվածն, իբրև Խորենացու «Հայոց պատմության» անկապտելի մաս, համեմատաբար լայն ուղադրության առարկա է եղել քրննական-բանասիրական աշխատանքներում, ինչպես նաև տարբեր կարգի թարգմանություններում: Նման ձեռնարկումներն անցնում են մի քանի տասնյակից: Տարբեր թարգմանություններում այդ հատվածը գրեթե նույնակերպ է, համահունչ այն բնօրինակի հետ, որից թարգմանվել է, այսինքն՝ թարգմանիչները հիմնականում (բացառությամբ թերևս Խալաթյանցի, Մալ-

² Տե՛ս Հ. Աճառյան. Հայերեն ստուգաբանություններ.—«Հանդես ամսօրյա», 1908, էջ 124 և հտ.:

³ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 1, Երևան, 1971, էջ 340—342:

⁴ Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի. նմանահանութիւն, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, 1991, էջ 398—435:

խասյանցի և այլոց) ունենում են առարկայական վերաբերմունք, չեն մեկնաբանում բնագրի այս կամ այն բառը կամ իմաստը: Դրանց համեմատությամբ զգալիորեն քիչ են լեզվաբանական-ստուգաբանական այն աշխատանքները, որոնցում այս կամ այն չափով փորձ է արվում պարզաբանելու այդ հատվածի կնճռոտ տեղերը (աբառերը), լուսաբանելու դրանց առանձին իմաստները: Աղբյուրագիտական աշխատանքները, որոնք թվով ամենաքիչն են, աչքի են ընկնում որոշ առավելություններ՝ ի համեմատություն մյուս երեքի: Նախ, սրանցում ի մի են բերվում նախորդ ժամանակների գրագրական-ձեռագրական աշխատանքների արդյունքները՝ դրանք ներկայացնելով մեկ ամբողջություն մեջ, որպիսով հստակորեն գծվում է ամբողջ հատվածի բնագրային դրվածքը: Եվ երկրորդ, նկատելի է դառնում տպագրությունների ընթացքում հրատարակիչների ունեցած վերաբերմունքը բնագրային տվյալ հատվածի առնչությամբ:

«Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը պարունակում է 12 բառ (նաև՝ և շաղկապը): Դրանք գործածվելիս են եղել հայերենի ավելի նախնական շրջանում, բանավոր ստեղծագործություն, մեջ, որոնցից 7-ը՝ տենչայ, Սաթենիկ, տիկին, տենչանս, ի, բառնիցն և Արգալանայ, բավական հասկանալի են և ինչ-որ չափով մեկնաբանելի հին գրական հայերենի (V—XI դդ.) բառապաշարի տվյալներով: Գործածվելով հնագույն հայերենի, հատկապես վերջինիս երկրորդ՝ ուշ հնագույն ենթաշրջանում (մ.թ.ա. III դ.—մ.թ. IV դ.) այդ բառաձևերը կենսունակորեն անցել են հին գրական հայերենին⁵: Այստեղ հարկ չենք համարում մանրամասն անդրադառնալու բանասիրական և ստուգաբանական այն աշխատանքներին, որոնցում այս կամ այն չափով քննության են առնվում հիշյալ բառերն ու բառաձևերը⁶, նշենք միայն, որ այդ կարգի դիտողությունները ևս անհրաժեշտ է նկատի առնել. օրինակ՝ (ա, ե) նշ սոսկածանցի մասին Ա. Բագրատունու մի դիտողությունը, որն ավելի բան ուշագրավ է և ոչ միայն մեր խնդրի լուծման տեսակետից, այլև՝ առհասարակ⁷:

Մյուս շորս բառերն են՝ (գ)աւրախոյր, խսւււրտ, (գ)տիզ և խաււրծի: Առ այսօր չունենք այդ բառերի եզրույթի և իմաստի սպառիչ ու համոզիչ բացատրություն, հավաստի ստուգաբանություն: Այդ հանգամանքը մինչև այժմ խոչընդոտել է հիշյալ հատվածի բովանդակության լիարժեք ըմբռնմանը:

Նախքան այդ բառերի բուն քննությանն անցնելը հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ հանգամանքին: Հայոց միպոսանքի այդ հատվածում գործ ունենը փոխաբերական խոսքի հետ, հատկապես գովերգի ձևով ասվում է մի բան մեկ այլ բան հասկանալու կամ հասկացնելու նպատակով: Ընդ որում ուս առվում է վաղնչական ժամանակներին բնորոշ լեզվամտածորություն: Հատկապես խստորեն դրված է եղել այլաբանության մոտիվը: Դեռևս խորենադին է նկատում, որ դրանք բանավոր ավանդած երգեր են, հատուկ նշում է, որ ինքու լսել է իբրև «թվեյադ երգեր»։ «Որ սա հեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն զինեւէտ գաւառին Գողթան. յորս շարհն բանք երողցն գԱրտաշիսէ և զորուող նորա... այլ և ճաշ ասեն դոժեայ Առ աւանայ ի պատիւ Արտաշիսի... Այլ և Արտաւազդայ ոչ գտեալ, ասեն, ռաջին որդուցն Արտաշիսի... նա աւից, ասէ, գնաց և շինեադ ի մէջ Մարաք գՄարակերտ... Այլ և տենչայ, ասեն, Սաթենիկ տիկին տենչանս...» և այլն (ընդգծումները մերն են.—Վ. Հ.)⁸: Եվ վատ արարմունքի մասին ժողովուրդը հիշում է պախարակելի ձևով, ինչպես որ լավ գործի համբավը նույն

⁵ Տե՛ս Գ. Ջա՛ռուկյան. Հայոց լեզվի սլաւոնություն (նախադրային ժամանակաշրջան). Երևան, 1987, էջ 20—26:

⁶ Տե՛ս «Հովիվ», 1908, № 21, էջ 335: Հմմտ. Սիոն Վարդապետ. Լուսաբանություն «Հարախուր», խաւարութի տենչանացն Սաթենիկայ.—«Հովիվ», 1909, էջ 235—237:

⁷ Հմմտ. Արսև Բաղրատունի. Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց. Վենետիկ, 1852, էջ 683:

⁸ Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց, էջ 81:

ժողովուրդը պանծացնում է դարերի ի վեր: Այդպես ծանակվում է Սաթենիկ տիկնոջ անհավատարմությունը («տենչանքը»): Այսպիսի գովերգի իմաստը լիարժեք ձևով ըմբռնելու համար անհրաժեշտ է դուրս գալ, ազատվել նոր ժամանակներին յուրահատուկ, առհասարակ քրիստոնեությանը բնորոշ մտածողությունից, թափանցել նախաքրիստոնեական գաղափարաբանության ոլորտները, կռահել հեթանոսական շրջանի հալկական լեզվամտածողության նրբությունները, որպեսզի հնարավոր լինի փոքրիշատե ըմբռնել այդ հատվածի ասելիքը, ըստ այդմ էլ կարելի լինի մեկնաբանել մեղ հետաքրքրող «խրթին» բառերը:

Այսպես, Առ. Բահաթրյանը հետևյալ դիտողությունն է անում այս կապակցությամբ. «...Հին հայոց մեջ անհամեմատ զարգացած էր բանաստեղծական և տաղաչափական տաղանդը, և որ նույնիսկ ոսկեդարի հայկական բարբառի ճյուղը այն հնագույն դարերում արդեն հղկված էր և ըստ արժանվույն մշակված, ինչպես որ ցուցանում են հնագույն լեզվաբանական փաստերը»⁹: Սա ընդհանուր դիտողություն է, որ վերաբերում է մինչքրիստոնեական հայ բանաստեղծական (բանավոր երգասացության) արվեստին՝ ասված մեղ հետաքրքրող հատվածի առիթով: Իսկ բուն այդ հատվածի վերաբերյալ արվող դիտողություններում առավել ճիշտ է մեկնաբանված հին ժամանակի հայ լեզվամտածողությունը. «Այս տողերով քերթողը, որ Սաթենիկի տրուփանքը կամեցավ արտահայտել, ոչ եթե Հոմերոսի պես բացարձակախոսությամբ անցնում է համեստության սահմանը, այլ հայոց բնատուր պարկեշտությամբ այն աստիճան քողածածկում է յուր միտքը, որ թերևս յուր ժամանակին էլ դժվար հասկանալի լիներ»¹⁰: Բանասերը շեշտում է հիշյալ հատվածի պարկեշտական բնույթը, այլև հայոց (բանաստեղծության) բնածին «պարկեշտությունը»: Ու թեև շարունակության մեջ Բահաթրյանն ավելի է ընդարձակում իր դատողությունների սահմանները և այլ վերլուծության տեղիք տալիս, սակայն դրանից առաջ նա այդ հատվածի իմաստը տեսնում է «նմանաբերության» մեջ, որում «շատ հմուտ էին հին քերթողները, և այստեղ արտախառյուր և անից ածականի պաշտոն են կատարում, ինչպես որ և հետ»՝ վահագնի երգի մեջ»¹¹:

Այնուհետև, միանգամայն համաձայն ենք նաև Գ. Տեր-Մկրտչյանի այն պնդմանը, թե այս հատվածը հայոց վիպասանքում «բամբառակ երգերի» ցայտուն նմուշ է. «Այժմս մեղ համար հասկանալի է, թե ինչ ակնարկություն է... Նման բամբառակ երգեր, որոնց նյութն է անդրավարտիքը, ոչ միայն այժմ մեր ժողովրդական բանաստեղծությանց մեջ կան, այլև այդպիսիներ հայտնի են միջնադարյան եվրոպական ազգերի մեջ»¹²: Սակայն համաձայն չենք մեծ բանասերի այն դիտողությանը, որ վերաբերում է վարտիքի «փողի» կամ «փողքի» փոխաբերացումներին: Դրանք, իրենց հերթին հետաքրքիր են, բայց բավական այլ իրողության արտահայտություն են: Որքան էլ անդրավարտիքի «փողի» կամ «փողքի» պատումները բազարկումային (կոնտամինացիոն) արժեք ունենան մեղ հետաքրքրող հատվածի արտախառյուր բառերի հետ, այդուհանդերձ դրանք փոխաբերացում են. անդրավարտիքի «փողքի» հետ կապված փոխաբերացումը սիրահարական է, բայց ոչ տարփական: Սույն հատվածը հենց արտահայտում է Սաթենիկի տարփանքը՝ առ այլ տղամարդ:

Մեղ հետաքրքրող հատվածը, ինչպես նշել ենք, փոխաբերական խոսքի նմուշ է: Փոխաբերացումը կատարված է ոչ այնքան այն իմաստով, որ, Ստ. Մալխասյանցի բառերով ասած, Սաթենիկը 1) «սաստիկ փափագում էր այս

⁹ Առ. Բահաթրյան. Հին հայոց տաղաչափական արվեստը. Շուշի, 1891, էջ 74:

¹⁰ Նույն տեղում, էջ 78:

¹¹ Նույն տեղում:

¹² Գ. Տեր-Մկրտչյան. Հայագիտական ուսումնասիրություններ. գիրք Ա, Երևան, 1979, էջ 131:

ու այն բույսերն ունենալ Արգավանի լեռներից», 2) «իր արքայական գահն ու թագը ցանկանում էր փոխել Արգամի (իմա՝ Արգավանի—Վ. Հ.) իշխանական գահով և պսակով», 3) «պարզապես ցանկանում էր Արգավանին, 4) «փափագելով փափագում է այսինչ բույսերին Արգավանի բարձրից»¹³, Մեկնաբանության այս բոլոր տարբերակներում ակնարկվում է անհավատարմությունը ամուսնու՝ Արտաշեսի հանդեպ և տարփալից սերը՝ Արգավանի նկատմամբ։ Սակայն, այդուհանդերձ, հատվածում գործածվող 4 բառերը փոխաբերացում են այլ երևույթների. և Գողթան երգիչները «բամբառակ» երգերին բնորոշ մեղմասացությամբ, փոխաբերական գործածությամբ անվանում են տարփածուի «բարեմասնությունները», որոնց էլ ձգտում է անզուսպ տարփանքով, տոփասներ կուրությամբ լցված անհավատարիմ, ուստի ծանակվող տիկինը։

Այլացեղ, հեթանոսական մտածողության շրջանակներում երևան եկող անհավատարմությունը դառնում է հայոց միջավայրում որոշակի ավանդույթով պայմանավորված «դավաճանություն», որն էլ «թվելյաց», այսինքն՝ թեքերին մշտահույժ ու «բամբասական» երգերի նյութ է դառնում, հարկ եղած դեպքում ծաղրի արժանանում «մահկանացու» գուսան-երգիչների բերանում՝ առ ի հանդիմանություն «աստվածային» արքաների վարք ու վարմունքի, «ապրելակերպի»։

Այսպիսով, հիշյալ հատվածի մինչև այժմ չստուգաբանված բառերի նախնական իմաստները ճիշտ վերհանելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ճիշտ ըմբռնել դրանց գործածության փոխաբերացման էությունը, հիմքում ընկած երևույթները։ Միայն դրանով է հնարավոր դառնում այդ բառերի ստուգաբանության հավաստիությունը և հիմքում ընկած իմաստների արժանահավատությունը, որոնց էլ անդրադառնում ենք ստորև։

Նախ, արտախոյր բառի մասին։ Լեզվաբան-բանասերների մի մասն այդ բառը հայերենում դիտել է փոխառություն՝ բառի մեջ մտցնելով բառակազմական ինչ-ինչ փոփոխություններ։ Ծիշտ է նկատում Գ. Պատկանյանը, որ «բոլոր թարգմանիչները սկզբնական և տառը ընդունում են հայցական հոլովի ցուցիչ։ Միայն Լազարդն է (Arm. Stud, 53) դիտում զարտախուր և այն նույնացնում պառս. zardach va-ի հետ»¹⁴։

Ասենք, որ Պ. Լազարդը նշում է ոչ միայն այդ բառի ուղիղ ձևը զ տառով հանդերձ, իբրև բառի արմատի անտրոհելի տարր, այլև գտնում է, որ այն առնչվում է պարս. زاردخاں («մի տեսակ ծաղկի անուն»), որն այլ բան չէ, քան աղավաղված (Աճառյանի բառով՝ «աղճատված») zardxwar բառից գոյացած մի ձև¹⁵, Հ. Հյուբշմանը, ինչպես հայտնի է, մերժում է Պ. Լազարդի ստուգաբանությունը՝ նշելով, որ «բառի իմաստը և կերպարանային տեղը դեռևս բավական մութ են»¹⁶։ Հետագա լեզվաբան-համեմատաբանները (օրինակ՝ Հ. Աճառյան, Գ. Զահուկյան), անկախ մեզ հետաքրքրող հատվածին առնչվելու պատեհությունից, հավանաբար խուսափել են որևէ ձևով այն ստուգաբանություն, համարել են կամ անստուգաբանելի բառ, կամ էլ որևէ վերաբերմունք չեն հայտնել նախկինում երևան եկած ստուգաբանությունների (օրինակ՝ Լազարդի, Հյուբշմանի և այլն) նկատմամբ¹⁷։

Մենք հակված ենք կարծելու, որ արտախոյր-ը բարդ բառ է՝ կազմված վաղնջահայերենում գործածված արտ «դուրս»¹⁸ և խոյր «արևելյան թագ»,

¹³ Մ ո վ ս ե ս և ո ռ ե ն ս ց ի. Հայոց պատմություն. Երևան, 1981, էջ 474—475։

¹⁴ Г. Патканян. Материалы для армянского словаря. Вып. 1, СПб., 1882, с. 24.

¹⁵ Հ մ մ տ. P. Lagarde. Armenische Studien. Göttingen, 1877, S. 53 (§ 759)։

¹⁶ H. Hübschmann. Armenische Grammatik. Leipzig, 1895—1897, S. 150.

¹⁷ Հ մ մ տ. Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. 1, Երևան, 1971, էջ 340—342, Գ. Զ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 367,

¹⁸ Հ. Ա ճ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 340, ք. սյունակ, վ. 6.

պսակ, փաթթոց, ավելի հին՝ ծածկոց» բառերից (հմմտ. ապախուրել «գլուխը բանալ»)։ Արտախոյր-ը բերված է Երեմիա Մեղրեցու բառարանում, սակայն ոչ թե այդ, այլ արտախուրակ ձևով («արտաքին պսակ, կամ վիճակ, որպես բոլոր կապ ձգեն ի սին, եւ թէ այլ ինչ»)¹⁹, Մխիթար Սեբաստացու բառարանում եւ արտախոյր-ը բերված է արտախուրակ ձևով, որն էլ բացատրվում է հետևյալ կերպ. «Բառս այս ելանէ ի բառէն խոյր, որ է ծածկոյթ գլխոյ, այսինքն գլխարկ կամ թագ եւ այլն։ Եւ աստ արտախուրակ, այսինքն՝ արտաքուստ երեւելի խուրիկ, որ եւ ռամկօրէն ասի մէնտիլ, զոր ի հնումն մեծամեծ իշխանքն արեւելից զնէին ի գլուխս իւրեանց»²⁰։

Արտ բառն ավելի ուշ՝ հին գրական հայերենում, ավելի ստույգ՝ «ետդասական գրաբարի» փոխում է, որ վերածվել է նախամասնիկի. հունարան հայերենում այն գործածվելիս է եղել որպես նախածանց (համարժեք հուն. ἐχ-, ἐξ- -իք, հմմտ. ἐχρεῶ «արտաշնչել», ἐχρεῶ «արտաբերել» եւ այլն), որն անցել է մեղանում լատինարան հայերենին (համարժեք՝ լատ. ex-ին. հմմտ. exporto «կրում եմ, շահում եմ, տանում եմ», exemplum «օրինակ, նմուշ», experientia, «սովորություն, փորձ») եւ գործածվում է նաեւ մեր օրերում՝ անցնելով արդի գրական հայերենին։

Խոյր-ը, ըստ Հյուբշմանի, փոխառություն է իրանականից (<պահլ. *xōδ, հմմտ. պլ. xaoδa- «սաղավարտ», հպարս. xauda- «գլխարկ», պարթ. xwd (xōδ), պարս. xol «սաղավարտ», աֆղան. xōl, օս. xoda, xūd «խույր» եւ այլն)²¹, իսկ իրանական ձևը միացվում է լատ. cudo «թաղիք սաղավարտ» բառին, եւ դրանք հանգեցվում են հ.-հ. *squeu- «ծածկել» արմատին։ Ըստ այսմ, մեզ հետաքրքրող հատվածում արտախոյր բառը գործածված ենք գտնում «զուրս ընկած (կտրավուն, բոլորածե, շրջանած) մի բան» իմաստով, այն փոխաբերաբար, տվյալ համատեքստում նշանակում է «ամորձի- (նեք)»։ Հ. Աճառյանն «Արմատականում» (հ. 1, էջ 339—342, հ. 2, էջ 392) առանձնացնում է արտախոյր բառը՝ ելնելով միայն սույն բնագրային հատվածի ընձեռած նշանակությունից։ Այն նույնն է, ինչ Ագաթանգեղոսի «Պատմություն» մեջ²² կիրառված արտախոյր-ը։ Աճառյանի բառարանում դրանք բերվում են իրարից առանձին բառահոգվածներով, որով ստացվում է այն տպավորությունը, որ այս դեպքում հայերենում գործ ունենք համանուն երկու արտախոյր բառի հետ։ Սակայն դա, կարծում ենք, այդպես չէ։ Իրականում Ագաթանգեղոսի բնագրում արտախոյր-ը գործածված է ուղղակի՝ «արքայական թագ» իմաստով։ Իսկ Խորենացու մոտ, ինչպես նշեցինք, գործածվելիս է եղել փոխաբերական, բառի անուղղակի իմաստով։ Ուստի այնքան էլ տեղին չէ, երբ «Արմատականում» նույն բառի երկու կիրառությունները նշվում են իրրեւ առանձին բառահոգվածի բառեր։ Այս վերջինը, ինչ խոսք, նախորդում է Ագաթանգեղոսի գործածությանը, ուստի բառը վաղնջահայերենում ունեցել է թե՛ ուղղակի (որպիսինի համար, ցավոք, շունենք վկայություն), թե՛ փոխաբերական կիրառություն։

Խաւարտ բառի մասին։ Այդ բառը չենք գտնում Երեմիա Մեղրեցու բառարանում, իսկ Մխիթար Սեբաստացին բառը հետևյալ կերպ է բացատրում. «է հասարակ (իմա՝ ընդհանուր—Վ. Հ.) ամենայն բանջարեղինաց կամ խո-

19 Երեմիա Մեղրեցի. Բառգիրք հայոց, Երեւան, 1975, էջ 41։

20 Բառգիրք հայկազեան լեզուի ի Մխիթարայ Սեբաստացու. հ. 1, վեներտիկ, 1749, էջ 112։

21 H. Hubschmann. Նշվ. աշխ., էջ 160. Այլն է. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 392, Գ. Ջահուկյան. Նշվ. աշխ., էջ 527, Այլն՝ А. Г. Перхачакин. Материалы к этимологическому словарю древнеармянского языка. Ереван, 1993, с. 9—11.

22 Ագաթանգեղոս. Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 7.

տեղինաց, զորս խարշելով կամ առանց խարշելոյ ուտեն մարդիկ, որպիսի է աղցանն, սամիթն և կամ այնք, որք ռամկօրէն կոչին քէրեկիդ, մաղտանոս և այլք նմանք»²³։ Հետադաշում ևս ուսումնասիրողների գերակշիռ մասը, հետեւելով Մխիթար Սեբաստացուն, այնուհետեւ՝ «Նոր հայկազյան բառարանի» հեղինակներին, խաւարտ-ը գիտել է իբրեւ մի բուսանուն։

Այս բառի մեկնութեան առումով, կարծում ենք, միանգամայն ճիշտ է Հ. Աճառլանի մոտեցումը՝ խաւարտ-ը դիտելով արտախոյր զոյականի ածական լրացումը՝ իբրեւ բառակապակցութեան հետադաս որոշիչ անգամ (արտախոյր խաւարտ)²⁴։

Խաւարտ-ը բաղադրված է խաւ և արտ բառերով։ Խաւ-ը «աղվամաղ, մաղաշերտ, թավ շերտ» հայերենում դեռևս շատուգաբանված բառ է, իսկ արտ-ը բավական հին է։ Վերջինս ոչ մի կապ չունի, գոնե վաղնջահայերենի շրջանում, առավել ևս հին գրական հայերենի կտրվածքում լայնորեն դործածվող, վերը՝ արտախոյր բառի դեպքում առանձնացված արտ («արտաքին կողմը, դուրս») բառի հետ։ Խաւարտ բառի մեջ հանդես եկող արտ-ը, մեր կարծիքով, ստուգաբանորեն կապվում է ալ բառերի հետ, այն է՝ հայերենում ծագումնաչին ընդհանրություն ունի մի կողմից՝ արատ, արատ («խոտ, արոտ»), մյուս կողմից՝ արած(ել), (տո)արած (տուար<հ.-ե. *dīpəro + արած), բրբռ. արծ(ալ) բառերի հետ (տ ~ ծ-ի համար հմմտ. խայտ ~ խայծ, բուտ, բուլ ~ բոյծ, բուծանեմ, պլոծ ~ պլտոռ, հ-պարտ ~ պարծ-ենամ, խեղդ ~ հեղծ, տատանեմ ~ ծածանեմ և այլն)։

Արատ, արատ արմատը (ծայնդարձի ա/ալ աստիճանով) ծագում է հ.-ե. *trag- արմատից (հմմտ. հուն. τράγω «կրծել, ուտել», թոխ. А и В trask «ծամել»)՝²⁵։ Այնուհետև այդ նույն արմատից է ծագում նաև արտ-ը (հմմտ. բրբռ. արծ-ալ)՝ կազմելով ծայնդարձի ստորին՝ զրո աստիճանը²⁶։ Ուստի, հայերենում միմյանցից անհրաժեշտ է տարբերել արտ բառի երեք համանուն՝ արտ (<հ.-ե. *trag- ցո «գաշտ, արտ»), արտ(ա)- («զուրս» իմաստով նախածանց) և արտ (<հ.-ե. *trag- «արածել, արոտ»)։ Պետք է կարծել, որ ստուգաբանորեն արտ-ը («ճարակ, արած-ել, արոտ») կապվում է արատ, արատ բառերին, իբրեւ ծագումնաչին ընդհանրություն ունեցող բառեր։ Արատ և արատ բառերի այն ստուգաբանությունը, որ բերվում է Գ. Զահուկյանի կողմից, այդ բառերը ծագած համարելով հ.-ե. *trag-ից²⁷, տվյալ դեպքում միանգամայն ընդունելի է և համոզիչ։ Սակայն պետք է ավելացնել, որ այն սահմանափակվում է արատ, արատ և արած բառերով, այսինքն՝ չի տարածվում արտ-ի վրա, իբրեւ նրանց հետ ծագումնաչին ընդհանրություն ունեցող վաղնջական բառ։ Այնինչ, ինչպես նկատում ենք, այդ շարքը համարվում է արտ («արոտ, արած-ել») բառով, որպիսով ավելի են ամբողջանում մեր պատկերացումները ծագումնաչին որոշակի ընդհանրություն ունեցող բառերի այդ փնջի մասին։

Այսպիսով, մեզ հետաքրքրող հատվածում խաւարտ բառը փոխանվանաբար արտահայտելիս է եղել «աղվամաղով, կարճ մաղաշերտով ծածկված».

23 Մխիթար Սեբաստացի. նշվ. աշխ., էջ 375, 11 սյունակ։

24 Հ. Աճառլան. Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 351—352։

25 Տե՛ս Գ. Զահուկյան. նշվ. աշխ., էջ 153, այլն՝ էջ 253։ Ի դեպ, աշխատության բառային գույքարանությունների ցանկում նշվում է թոխ. զուգահեռության մասին (էջ 153), իսկ բարբառային հնչյունական տարբերակների թվարկման ժամանակ այդ զուգահեռ չի նշվում (էջ 253)։ Եվ թոխ. զուգահեռ բերում ենք բոտ հեղինակի մյուս գրքի (Դ. Բ. Մ. Ж а в к я н. Грамматика армянского языка. Ереван, 1982, с. 57)։

26 Հմմտ. Հ. Աճառլան. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 37։

27 Տե՛ս նաև Ա. Ա. Աբրահամյան. Բառարանական դիտողություններ.— ՀՈՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 4, էջ 62—63։

պատճառ, այլև՝ աղվամազի, մազաշերտի միջից երևացող, մերկացած» իմաստը:

Տարակարծության տեղիք տվող բառերից երրորդը տից բառն է: Կարծում ենք, որ այն ներկայացնում է տի՛ք բառի հոլովված ձևը, այսինքն՝ կիրառված է ոչ թե իբրև անեզական բառ, այլ որպես սովորական հոգն. սեռ. տր. ձև: Այդ ձևը ավելի նախնական է, և այն բավական գործուն պիտի եղած լինի վաղնջահայերենում: Բառի երբեմնի, նախնական եզակին է տի, որն այդ ձևով ավանդված չենք գտնում («օր, հասակ, շրջան, ժամանակաշրջան»)²⁸: Այդ բառին Գ. Ջահուկյանը ևս հատկացնում է «տարիք» ընդհանուր իմաստը: Սակայն ամեն դեպքում նկատի է առնված բառի բուն՝ ժամանականիշ իմաստը, ինչպիսին որ է նրա բառարանային իմաստը: Այնինչ, այս հատվածում տի-ք բառը գործածվելիս է եղել այլ՝ փոխաբերական իմաստով, որը բխում է բառի ուղղակի, բուն իմաստից: Հայտնի է, որ տի-ք բառը ծագում է հ.՝ *ti-t* ձևից (հմմտ. տնգլ. *tid* «ժամ, ժամանակ»)²⁹:

«Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածում գործածված զտից ձևի գ-ն նախդիր է և ոչ թե արմատի (անտրոհելի) մաս: Այսպես, բառի եզ. ուղղ. ձևը եղել է տի-ն, իսկ հոգն. ուղղ. ձևը՝ տի-ք: Վերջինս հետագայում է, որ վեր է ածվել անեզական գոյականի: Եվ այդ տի-ն էլ վաղնջահայերենում հոլովվել է որպես մի սովորական, այսինքն՝ ոչ իբրև անեզական բառ: Այստեղ առկա է քերականական վերաիմաստավորում՝ սովորական բառից անեզականի վերածվելու ողջ իմաստաբանությանը [հմմտ. դի ~ դիք, հոգն. սեռ. դից («աստվածներ») ձևերը]:

Վերջապես, խաւարծի բառի մասին: Այդ բառը, կարծում ենք, ծագումով նույնն է, ինչ խաւարտ-ը, սակայն խաւարծ-ը բառակազմական ի մասնիկի շնորհիվ վեր է ածվել գոյականի (հմմտ. գեր-ի, գին-ի, բարտ-ի, յղ-ի, մայր-ի, տեղ-ի և այլն)³⁰: Հնդ որում դրանք միմյանցից զանազանվում են տ ~ ծ լծորդությանը (որի մասին խոսք եղավ վերը): Ջահուկյանը թեականորեն խաւարծի-ն կապում է խաւ-ի հետ՝ նկատի առնելով հետագա շրջանի խաւարծիլ (սխաշնդեղ) ձևը³¹: Նման առնչություն տեսնելը վաղուց է հայտնի. նախկինում այդպես է կարծել և Գ. Տեր-Մկրտչյանը³²: Սակայն Ջահուկյանը գտնում է, որ, տվյալ դեպքում ևս, այդ բառը կարելի է դիտարկել իբրև հարավկովկասյան (քարթվեական) լեզուների հետ հայերենի ունեցած առնչությունների մի օրինակ, թեև հատուկ նշվում է, որ թե՛ մի քանի այլ և թե՛ խաւարծի բառերի դեպքում նմանությունը պետք է պատահական համարել, եթե չենթադրենք բաղադրություն [ըստ նրա՝ հմմտ. խաւարծ «ծիլ» (ուշ՝ խաւարծիլ «խաշնդեղ». հայ. խաւ-ի՞ց)-վրաց. *ყვარლი* - «մուխոտ, շարուն-թյուն», մեգր. *ყურული* - «ժանտախտ. դժբախտություն», ճան. *ყურული* - «թափն. դժբախտություն», վրաց.-գան. **ყვარლი* - «*folium temulentum*, որոմ»]³³:

Վիպասանքի այդ հատվածում խաւարծի բառն արտահայտում է «աղվամազով ծածկված բույս՝ ընծյուղ, ծիլ» իմաստը, իսկ փոխաբերաբար՝ «առնին»³⁴: Եվ ի տարբերություն և ի հակակշիռ արտախոյր-ի, որ նշանակում է «աղվամազով ծածկված, դուրս ընկած կտրավուն, բոլորածե (մի բան)», այս դեպքում «բամբառակ» ձևով մատնացույց է արվում՝ խաւարծի-ն: Երկուսն էլ գործածված են փոխաբերական իմաստով, ուստի պարզ է, թե հատվածում ինչպիսի նշանակություն են ձեռք բերած եղել:

28 Հմմտ. Գ. Ջահուկյան. նշվ. աշխ., էջ 726, ալև. 117, 217, 269, 401:

29 Գ. Ջահուկյանի նշվ. աշխ., էջ 117-ում տի-ք («տարիք») և տի («օր») արմատների ընդհանուրն է նշվում տե-ն, տի (<հ.՝ **dei-*) ձևը:

30 Տենչ. Գ. Ջահուկյան. նշվ. աշխ., էջ 231:

31 Նույն տեղում, էջ 598:

32 Գ. Տեր-Մկրտչյան. նշվ. աշխ., էջ 133:

33 Գ. Ջահուկյան. նշվ. աշխ., էջ 598:

34 Հմմտ. Գ. Տեր-Մկրտչյան. նշվ. աշխ., էջ 131:

Վերջապես, հարկ ենք համարում նշել, որ հիշյալ շորս բառերը հատվածում կազմում են երկու բառակապակցություն, մեկը՝ զարտախոյր խաւարտ, իսկ մյուսը՝ զտից խաւարծի: Առաջինը հետադաս որոշչային, իսկ երկրորդը առաջադաս հատկացուցչային բառակապակցություն է: Ըստ որում մի դեպքում զ նախդիրը դրված է իր բուն տեղում, իսկ մյուս դեպքում այն իր վրա է կրում լրացումը. երկրորդ դեպքում, համապատասխան հին գրական հայերենի շարահատության, կանոնական կլիներ, եթե ունենայինք զխաւարծի տից: Պետք է ընդունենք, որ շրջուն շարահատության երևույթներ նկատելի են նաև վաղնջահայերենում: Շարահատության նման տարբերությունը կազմում է հին գրական հայերենի նորման, որն էլ այս կամ այն չափով պայմանավորված է վաղնջահայերենի համակարգի ժառանգումով՝ որոշակի բացառություններով և տարբերություններով հանդերձ:

Այստեղ հարկ չենք համարում թարգմանել վիպասանքի այդ հատվածը, իմաստը միանգամայն հասկանալի է, թարգմանությունը՝ ոչ պատշաճ:

ФРАГМЕНТ ИСТОРИИ МОВСЕСА ХОРЕНАЦИ «ТОМИТСЯ ЦАРИЦА САТИНИК»

Доктор филол. наук В. Г. АМБАРЦУМЯН

Р е з ю м е

Исследователи Истории Мовсеса Хоренаци неоднократно пытались объяснить фрагмент «Томится царица Сатиник», этимологизировать некоторые «трудные» слова. В статье делается попытка по-новому осветить известный отрывок. В нем есть 12 слов, 4 из которых (*արտախոյր* — *agtaxoγ*, *խաւարտ* — *hawart*, *(զ)տից* и *խաւարծի* — *hawarcil*) не имеют достоверной филологической интерпретации, не подвергались лингвистическому анализу (госп. этимологии). Упомянутый фрагмент до сих пор воспринимается как явная оговорка. Нам думается, что предшествующие попытки объяснить «семантику» фрагмента не дали результата именно потому, что исследователи не проникли в суть метонимического содержания, семасиологии текста, т. е. т.м.: не преодолено мировоззрение армянского средневековья, в частности они не проникли в суть дохристианского мироощущения.

Слово *արտախոյր* образовано компонентами *արտ* («вне, за») и *խոյր* («пакидка, госяйка» < пехл. *hod*, ср. ав. *haoda* «шлем», иперс. *hauda* — «шляпа» и т. д.) метонимически означает *ամործի* („*tesiculus*“) *խաւարտ* — компонентами *խաւ* («ворс») и *արտ* (варианты: *արատ*, *արատ* «грава, пастбище», а также *արած(ել)* «пасться» (< и-е. **træg'*-, ср. гр. *τρῆγω* «грызть, есть», тох. А и В *träsk* «жевать»), *զտից* является склоняемой формой слова *տիք* («возраст, период» < и-е. **di-t* ср. англ. *tid* «час, время»), а *խաւարծի* (< *խաւարծ-ի* «росток») образовано от слова *խաւարտ* при помощи частицы *-ի* (ср. *գեր-ի* «пленный», *բար-ի* «тополь» и т. д.) и чередования *տ-ծ* (ср. *հպարտ* «гордый», *պարծենալ* «горжусь» и т. д.), т. е. метонимически означающий «репиз». Таким образом, мы имеем дело с фрагментом, где говорится одно, чтобы понималось другое (метонимия). Тем самым содержание фрагмента довольно ясно, и его перевод на новоармянский язык в статье считаем не уместным.